ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՌԵՎՏՐԱՅՆԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՄԱՆ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաք Երևան «27» հուլիսի 2012 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե), ի դեմս Կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, «Տեքնոլոջի Տրանսֆեր Ասոցիացիա» իրավաբանական անձանց միությունը (այսուհետ՝ Միություն), ի դեմս Միության խորհրդի նախագահ Միքաել Աբովյանի, որը գործում է Միության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, և «Զարգացման հայկական գործակալություն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն), ի դեմս Ընկերության գլխավոր տնօրեն Ռոբերտ Հարությունյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր), կնքեցին գիտական հետազոտությունների արդյունքների առևտրայնացման միջազգային համագործակցության աջակցման նորարարական կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) ստեղծման սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1. Նպատակ ունենալով նպաստել Հայաստանի Հանրապետությունում նորարարական գործունեությանը, առևտրայնացման ներուժ ունեցող գիտատեխնիկական մշակումների իրականացմանը, գիտական հետազոտությունների արդյունքների առևտրայնացմանը, նոր տեխնոլոգիաների ստեղծմանն ու կիրառմանը, կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական հետազոտությունները տնտեսության կոնկրետ խնդիրների լուծմանն ուղղելուն, գիտություն-տնտեսություն կապի ամրապնդմանը և ոլորտում պետություն-մասնավոր հատված համագործակցության զարգացմանը՝ Կողմերը

պարտավորվում են կենտրոնացնել իրենց հնարավորությունները և ստեղծել Կենտրոն:

2. Կողմերի պարտավորությունները

2.1. Կոմիտեի պարտավորությունները՝

2.1.1. գիտական արդյունքների առևտրայնացմանը և տնտեսության մեջ ներդրմանն աջակցություն.

2.1.2. Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպությունների, գիտական աշխատողների խմբերի (կոլեկտիվների) և գիտական աշխատողների (այսուհետ՝ Գիտատեխնիկական խմբեր) կողմից կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված նորարարական ծրագրերի (այսուհետ՝ Ծրագիր)՝ Կենտրոնին ներկայացմանը խթանում:

2.2. Միության պարտավորությունները՝

2.1.1. Կենտրոնին ներկայացված Ծրագրերի փորձաքննությունների ընդհանուր գործընթացի իրականացման կազմակերպում.

2.2.2. Ծրագրերի տեխնիկական իրագործելիության փորձաքննության իրականացում.

2.2.3. բոլոր փորձաքննություններն անցած Ծրագրերի ներկայացում շահագրգիռ կազմակերպություններին, և վերջիններիս կողմից հետաքրքրվածության ցուցաբերման դեպքում՝ առևտրայնացմանն ուղղված համապատասխան պայմանագրերի կնքման հարցում աջակցություն.

2.2.4. Կենտրոնին Ծրագրեր ներկայացրած Գիտատեխնիկական խմբերի մասին տեղեկությունների հավաքագրում, Ծրագրերի նախագծերի առևտրայնացման ներուժի նախնական գնահատում.

2.2.5. Ծրագրերի իրականացման նպատակով կոնսորցիումային սկզբունքներով գործող ժամանակավոր, այդ թվում՝ միջազգային միավորումների ստեղծմանն աջակցություն:

2.3. Ընկերության պարտավորությունները՝

2.3.1. հայկական նորարարական տեխնոլոգիաների հանդեպ հետաքրքրություն ցուցաբերող օտարերկրյա կազմակերությունների համար գործնական այցերի և

տեղական համապատասխան կազմակերությունների հետ հանդիպումների կազմակերպում.

2.3.2. արտասահմանյան միջոցառումներին Կենտրոնի գործունեության ներկայացում.

2.3.3. առկա տեխնոլոգիաների, տեխնոլոգիական լուծումների, նորարարական առաջարկների, բիզնես նախագծերի մասին գործարար շրջանակներին տեղեկատվության տրամադրում՝ համապատասխան շնորհանդեսների, տեղեկատու նամակների և այլ միջոցներով.

2.3.4. հայկական և օտարերկրյա Գիտատեխնիկական խմբերի համար Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության, գիտատեխնիկական մշակումների արտոնագրման և այլ իրավական հարցերի վերաբերյալ խորհրդատվության տրամադրում:

2.4. Կողմերը պարտավորվում են իրենց իրավասությունների և Համաձայնագրի շրջանակներում աջակցել միմյանց:

2.5. Կողմերը պարտավորվում են համատեղ մշակել Կենտրոնի աշխատանքի կանոնակարգը:

2.6. Կողմերը պարտավորվում են, առանց միմյանց համաձայնության, երրորդ կողմին չփոխանցել նախապես գաղտնի համարվող տեղեկությունը:

3. Եզրափակիչ դրույթներ

3.1. Սույն Համաձայնագիրը չի կարգավորում Կողմերի միջև որևէ ֆինանսական հարաբերություններ: Անհրաժեշտության դեպքում դրանք կկարգավորվեն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ առանձին պայմանագրերով:

3.2. Կողմերի հարաբերությունները Համաձայնագրով չնախատեսված դեպքերում կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

3.3. Կողմերի փոխադարձ համաձայնությամբ Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք կձևակերպվեն առանձին արձանագրությամբ: Արձանագրությունը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը և ուժի մեջ կմտնի սահմանված կարգով:

3.4. Համաձայնագիրն ուժի մեջ է ստորագրման պահից և գործում է առանց ժամկետի սահմանափակման:

3.5. Համաձայնագրի գործողությունը կարող է դադարեցվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ մյուս Կողմերին առնվազն մեկ ամիս առաջ գրավոր տեղեկացնելուց հետո:

3.6. Համաձայնագիրը կազմված է հայերեն, երեք հավասարազոր օրինակներից՝ մեկական օրինակ յուրաքանչյուր Կողմին:

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կողմից	«Տեքնոլոջի Տրանսֆեր Ասոցիացիա» իրավաբանական անձանց միության կողմից	«Զարգացման հայկական գործակալություն» փակ բաժնետիրական ընկերության կողմից
ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ՝	«Տեքնոլոջի Տրանսֆեր Ասոցիացիա» իրավաբանական անձանց միության խորհրդի նախագահ՝	«Զարգացման հայկական գործակալություն» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրեն՝
Սամվել Հարությունյան	Միքայել Արոյան	Ռոբերտ Հարությունյան